

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	ԼՃԱՇԵՆ
ՄԱՐԶ	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ



**1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

Գյուղի պատմությունը սկիզբ է առնում վաղնջական ժամանակներից: Որպես բնակավայր սկզբնավորվել է մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջին: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերին , այն վերածվել է ամրոցի: Հնագույն քաղաք ամրոցի /միջնաբերդով/ պարիսպների մնացորդները պահպանվել են գյուղից 2 կմ հարավ և հարավ-արևելք, ունեն 3-4 մ , որոշ տեղերում՝ 5-7մ հաստություն: Հնագիտական պեղումների և երկրաբանական ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերվել են 3-2-րդ հազարամյակի գտածոներ:

Գյուղի տարածքը իսկական թանգարան է բաց երկնքի տակ: Գյուղի արևելյան կողմում, նախաուրարտական բնակատեղի մոտ, մեծ ու անտաշ քարաժայռի վրա փորագրված է գյուղի մասին առաջին գրավոր հիշատակումը Արգիշտի Առաջինի մ.թ.ա. 776թ այստեղ թողած սեպագիր արձանագրությունը: Լճաշենի հուշարձանախումբը, Իշտիկունիու հավաքածուն մեր նախնիների, նախաուրարտական և ուրարտական հայկական հարուստ մշակույթի պեղճախոս վկան են՝ լայնորեն հայտնի տարբեր երկրների գիտական շրջաններում:

Գյուղը վերակենդանացել է 1928թ-ին, երբ հիմնավորվել են Մակվից, Դիաղենից, Բայազետից գաղթած 58 հայ ընտանիքներ: Գյուղը կոչվել է Պորտակ, Օրդակլու, Էրդակլու, Օրդաքլու: 1946թ-ի ապրիլին գյուղն անվանվել է Լճաշեն:

**2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

Համայնքի տարածքը կազմում է 5954 հեկտար: Համայնքը գտնվում է Գեղամա և Փամբակի լեռնաշղթաների գոգավորությունում Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին, ունի համեմատաբար բարենպաստ կենսապայմաններ: Գեղամա կանաչ լեռները որոշակի թեքություններով իջնում են գյուղի արևմտյան մասերը՝ կազմելով օղակաձև լեռնաբազուկներ: Ընդարձակ և հարթ սևահողային տափաստանը գյուղի հացի շտեմարանն է: Իսկ արևելյան մատույցներում Սևանա Լիճն է , որը ոչ պակաս կենսական դեր է ունեցել լճաշենցու կյանքում: Լիճը կյանք ու բարիք է գյուղի բնակչության համար:

Սևանի ավազանը հայտնի է իր խայտաբղետ կլիմայով: Սևանա լիճը՝ Լճաշենի կլիման ձևավորող հիմնական գործոններից մեկն է: Տարվա ընթացքում առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տարբերությունը բավական մեծ է: Հունվար ամսին օդի ջերմաստիճանը կարող է իջնել -30 աստիճան, իսկ օգոստոսին սովորում օդի ջերմաստիճանը երբեմն բարձրանում է +30 աստիճան: Մթնոլորտային տեղումների քանակը կարող է հասնել մինչև 600 մմ:

Հարուստ է Լճաշենի բուսաշխարհը /բացված գրունտների բույսեր, արմատական ափամերձ բույսեր, ալպյան գոտու բույսեր/, հաշվվում է շուրջ 1600 բուսատեսակ, որոնցից 1500-ը ծաղկավոր բույսեր են: Գյուղում , բացի հայկական և իրանական տեսակներից, կան նաև բույսերի էնդեմիկ տեսակներ: Դրանց մեջ քիչ չեն նաև դեղաբույսերը:

Հացազգի մշակաբույսերից գյուղում աճեցնում են աշնանացան ցորեն, գարնանացան գարի, վարսակ, հաճար, աճեցնում են նաև կարտոֆիլ:

**3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	400մմ
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (°C)	-20°C
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (°C)	25°C

**4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից	
---	--

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Սևան
3. Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	60կմ
3.2) մարզկենտրոնից (կմ)	40կմ
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	80կմ
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	3կմ
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	3կմ
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	5կմ
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	2000մ
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	5954 հա
6. Սահմանակից համայնքների անվանումները	Չկայովկա, Սևան, Վարսեր
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	Lchashen.gegharqunig@mta.gov.am
8. Համայնքային պաշտոնական կայքի հասցեն	Lchashen.am
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	+37498969669
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	+37426127417
11. Համայնքի հեռախոսային կոդը	0261
12. Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	Այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	1510
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	Այո
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	Ոչ

**5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	4863
2. Գրանցված ծնունդների քանակը	40
2. Մահացության դեպքերի քանակը	35
3. Ամուսնությունների քանակը	
4. Ամուսնալուծությունների քանակը	
5. Տնային տնտեսությունների թիվը	1110
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	129
7. Կենսաթոշակառուների քանակը	385
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	80

**6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	2018թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	-
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	-
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	1

### 7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ <sup>2</sup> )	71720
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	4
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	831

### 8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	5954
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	5122.26
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	296.33
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	2565
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	1752
7. Խոզերի գլխաքանակը	452
8. Գյուղատնտեսական տեխնիկա	21
8.1 տրակտորներ (քանակը)	15
8.2 կոմբայններ (քանակը)	6
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	1110

### 9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	1
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	Այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	25 կմ
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	-
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	-
6.2 Էքսկավատորների քանակը	-
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	-
6.4 Գրեյդերների քանակը	-
6.5 քանակը	-
6.6 Աղբատար մեքենաների քանակը	-
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	-
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	-

6.9 Ավտոաշտարակների քանակը	-
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	-
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

**10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**  
**Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)**

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ	126000.0	23400.1
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	16566.0	6070.9
2.1 հողի հարկ	6747.0	1181.9
2.2 գույքահարկ	9819.0	4889.0
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	100525.0	16754.3
3.1 դոտացիա	99824.9	16637.4
3.2 սուբվենցիա	700.1	116.9
4. Մուտքեր հողի օտարումից	2000.0	

**Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. դրամ)**

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	126000.0	14292.8

**Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)**

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	33310.1	

**Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)**

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	33310.1	

**11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ**

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդորից՝	16
1.1 համայնքային ծառայողներ	7
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	44900.0
3. Ավագանու անդամների թվաքանակը	9

<b>Հիմնախնդիրը</b>	<b>Ակնկալվող լուծումը</b>
Ներհամայնքային ճանապարհի ասֆալտապատում 1.3 կմ	Համայնք, կառավարություն
Մանկապարտեզի մասնակի վերանորոգում	Համայնք, կառավարություն
Չմշակվող հողերի մշակում	Համայնք, կառավարություն
Պատմամշակութային հուշարձանների տարածքների բարեկարգում	Համայնք, կառավարություն
Թանգարանի վերակառուցում	Համայնք, կառավարություն
Ոռոգման համակարգի և խորքային հորի վերանորոգում, ցանցի ընդլայնում	Համայնք, կառավարություն
Երկրորդական ճանապարհների հարթեցում	Համայնք, կառավարություն
Սելավատարների կառուցում	Համայնք, կառավարություն
Դաշտամիջյան ճանապարհների լուսավորություն	Համայնք, կառավարություն
Նոր գերեզմանատան ցանկապատում	Համայնք, կառավարություն
Մարզադպրոցի խաղահարապարակի վերանորոգում	Համայնք, կառավարություն
Մարզադաշտի ջեռուցման համակարգի անցկացում	Համայնք, կառավարություն